

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Քաղաքաշինության կոմիտեն հայտարարում է մրցույթ

«Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար

• **Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝**

ա) ՀՀ քաղաքացիություն.

բ) բարձրագույն կրթություն.

գ) հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ թանգարանագիտություն կամ կառավարում բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ:

• **Տնօրենը՝**

- 1) Առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում գործարքներ (պայմանագրեր),
- 2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի ու լիազորված պետական մարմնի որոշումներով ու կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,
- 3) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,
- 4) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,
- 5) կատարում է աշխատանքի բաշխումն իր տեղակալների միջև,
- 6) սահմանում է կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը,
- 7) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,
- 8) իրականացնում է օրենքով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Մրցույթին մասնակցել ցանկացողները փաստաթղթային կամ էլեկտրոնային տարբերակով պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում՝ (ծևը կցվում է).
- բարձրագույն կրթությունը հավաստող դիպլոմ(ները) (բնօրինակը (բնօրինակները) և պատճենը (պատճենները), իսկ փաստաթղթերն էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու դեպքում՝ բնօրինակի (բնօրինակների) սկանավորված տարբերակը).
- երկու գունավոր լուսանկար՝ 3X4 չափսի (էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ էլեկտրոնային).
- անձնագիր կամ նույնականացման քարտ (բնօրինակը և պատճենը, իսկ էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ բնօրինակների սկանավորված տարբերակը).
- Ինքնակենսագրություն՝ (ծևը կցվում է).

- գիտական աստիճանի վկայականը (բնօրինակը (բնօրինակները) և պատճենը (պատճենները), իսկ էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ բնօրինակի (բնօրինակների) սկանավորված տարբերակը)՝ առկայության դեպքում.
- աշխատանքային գործունեությունը հավաստող վավերացված համապատասխան տեղեկանք (փաստաթուղթ), որը կբավարարի սույն հայտարարությամբ սահմանված պահանջներին և հաշվառման համակարգի տեղեկատվական բազայում առկա տվյալները ներառող տեղեկանք նախկին աշխատանքային գործունեության վերաբերյալ.
- օտար լեզվի իմացությունը հավաստող փաստաթուղթը (բնօրինակը (բնօրինակները) և պատճենը (պատճենները), իսկ էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ բնօրինակի (բնօրինակների) սկանավորված տարբերակը)՝ առկայության դեպքում.

Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի **2024 թվականի ապրիլի 9-ին՝ ժամը 15:00-ին** Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն N 3):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի **2024 թվականի ապրիլի 17-ին՝ ժամը 15:00-ին**, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն N 3):

Հիմնական աշխատավարձը՝ 410 000 (չորս հարյուր տասը հազար) ՀՀ դրամ:

Թեստավորման փուլին նախապատրաստվելու համար անհրաժեշտ նորմատիվ իրավական ակտերի և հմտությունների շրջանակն է (թեստային հարցերի նմուշը կցվում է)՝

ՀՀ Սահմանադրություն, հոդվածներ՝ 5, 33-34, 49-51, 57, 86, 118-122, 146-161
 Հղումը՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510>

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենք, հոդվածներ՝ 1-26
 Հղումը՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=187286>

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք, հոդվածներ՝ 13-20, 28, 83-102, 109-130, 137-149, 150-214
 Հղումը՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=59508>

«Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» օրենք, հոդվածներ՝ 1-32
 Հղումը՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=121002>

«Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» օրենք, հոդվածներ՝ 1-32
 Հղումը՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=178242>

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենք, հոդվածներ՝ 1, 3-5, 8-14, 22, 30-31
 Հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=175724>

«Քաղաքաշինության մասին» օրենք, հոդվածներ՝ 1-30

Հարցազույցի փուլին նախապատրաստվելու համար անհրաժեշտ նորմատիվ իրավական ակտերի և հմտությունների շրջանակն է՝

- «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենք,
- «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք
- «Գնումների մասին» ՀՀ օրենք
- «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք
- «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Հայաստանի

Հանրապետության օրենք

- «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» ՀՀ օրենք

• ՀՀ քաղաքաշինության նախարարի 2016 թվականի մայիսի 18-ի N 97-L հրամանի հավելվածով հաստատված «Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրություն.

1. Որոշումների կայացում
2. Հաղորդակցման հմտություններ
3. Կոնֆլիկտների կառավարում
4. Ժամանակի կառավարում
5. Տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
6. Ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.

Մրցույթի հարցազույցի փուլ անցած մասնակիցները «Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության զարգացման և բարեփոխման իրենց մշակած հայեցակարգը՝ էլեկտրոնային տարբերակով պետք է ներկայացնեն մինչև 2024 թվականի ապրիլի 16-ը՝ ժամը 15:00:

Հայեցակարգը պետք է՝

- 1) լինի առավելագույնը 20 էջ.
- 2) պարունակի պետական կազմակերպության ոլորտի առկա խնդիրների համակարգային վերլուծությունը և գնահատումը.
- 3) ներառի պետական կազմակերպության բնագավառի զարգացման և բարեփոխման առաջարկները:

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3 հասցե, 4-րդ հարկ, 446 սենյակ, ամեն օր, բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 10.00-ից մինչև 16.00-ը, կամ էլեկտրոնային տարբերակով՝ էլեկտրոնային փոստի հասցե՝ g.grigoryan@minurban.am:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2024թ. փետրվարի 23-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի
անձնակազմի կառավարման բաժին՝ հեռ. (011 621 735),
էլեկտրոնային փոստի հասցե՝ g.grigoryan@minurban.am:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների մրցույթի, ընտրության (նշանակման) ընդհանուր կարգը և չափորոշիչները սահմանելու մասին» N 539-Ն որոշման հավելվածի 17-րդ կետը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն հետաքրքրված հասարակական կազմակերպություններին հրավիրում է դիմելու ՀՀ քաղաքաշինության կոմիտեի «Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթի մրցութային հանձնաժողովներում ընդգրկվելու նպատակով:

Դիմել կարող են այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակները և խնդիրներն առնչություն ունեն պետական կազմակերպության գործունեության ոլորտի հետ և դիմելու ամսվան նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում գործունեություն են ծավալել տվյալ ոլորտում:

Բոլոր հետաքրքրված հասարակական կազմակերպությունները ստորագրված դիմումները կարող են ներկայացնել՝ ուղարկելով a.grigoryan@minurban.am էլեկտրոնային հասցեին:

Դիմումների ընդունման վերջնաժամկետը 2024 թվականի փետրվարի 23-ն է:

Դիմումի մեջ անհրաժեշտ է նշել՝

1. Կազմակերպության անվանումը
2. Կազմակերպության գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն
3. Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանունը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն
4. Կազմակերպության գործունեության բնույթը:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի անձնակազմի կառավարման բաժին (011 621 735)